

Անհապաղ թողարկման համար
1-ը ղեկտեմբերի, 2010թ.

Պատասխանատու՝ Եվգենյա Պատուրյան,
ՀՌԿԿ-Հայաստանի ՏՀՆ ծրագրի ղեկավար
էլ-փոստ՝ jenny.paturyan@crcccenters.org,
հեռ.՝ 58-13-30, 58-14-50

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնները հրապարակելու են ընտրանքային հարցման վեցերորդ շրջափուլի հիմնական արդյունքները

Հայաստանի Հանրապետություն, Երևան – 2010թ. ղեկտեմբերի 1-ին՝ ժամը 11-ին, «Կոնգրես» հյուրանոցի (Բտալիայի փող. 1) «Պիկասո» սրահում Եվրասիա համագործակցություն հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) ծրագրի հայաստանյան կենտրոնը ներկայացնելու է 2009 թվականի աշնանը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի շուրջ 6000 տնային տնտեսություններում իրականացված ընտրանքային հետազոտության որոշ արդյունքներ: Այս հետազոտությամբ պատահականորեն ընտրված չափահաս հարցվողները պատասխանել են ավելի քան 120 հարցերի: ՀՌԿԿ Տվյալների հավաքագրման նախաձեռնություն կամ Կովկասյան բարոմետր ծրագրի շրջանակներում 2004թ. ի վեր ամեն տարի միասնական մեթոդաբանությամբ միաժամանակ իրականացվող հարցումների նպատակը հարավկովկասյան երկրներում սոցիալական, քաղաքական և տնտեսական գործընթացների վերաբերյալ համադրելի և արժանահավատ տվյալների հավաքագրումն է: Այն բացառիկ հնարավորություն է տալիս համեմատելու Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում առկա կացությունը, հետևելու դրա տարեցտարի զարգացումներին: Համեմատությունները հնարավոր են նաև ըստ մայրաքաղաքների, գյուղական ու քաղաքային վայրերի:

2009թ. հավաքագրված տվյալներից ակներև է, որ թեև հարավկովկասյան բոլոր երկրներում էլ համընդհանուր մտահոգության առարկա են շարունակում մնալ գործազրկությունը, աղքատությունը, կոռուպցիան, արտաքին աշխարհաքաղաքական իրավիճակը, այդ հիմնախնդիրների առաջնայնությունը նկատելիորեն տարբեր է: Այսպես, Հայաստանում հարցվածներին ամենից ավելի հուզում են գործազրկությունը և կոռուպցիան (այդ հիմնախնդիրներն են մատնանշել հարցվածների համապատասխանաբար 29 և 18 տոկոսը), Վրաստանում՝ գործազրկությունը (32%) և խաղաղությունը (17%), իսկ Ադրբեջանում՝ տարածքային ամբողջականությունը (42%) և գործազրկությունը (18%):

Շրջապատող տնային տնտեսությունների համեմատ իրենց տնտեսական կացությունը միջին են համարել Հայաստանում հարցվածների 61%-ը, Ադրբեջանում և Վրաստանում հարցվածների 51 և 52 տոկոսը: Մեկից տասը միավորանոց սանդղաթի վրա իրենց տնտեսությունը բարձր 8-10 միջակայքում են համարել Հայաստանում հարցվածների միայն 1,5 տոկոսը, իսկ ամենաստորին 1-2 միջակայքում՝ 18 տոկոսը:

Ըստ երկրների բավական հետաքրքրաշարժ են նաև կառավարման համակարգի վերաբերյալ հանրային կարծիքը բնութագրող տվյալները. Հայաստանում հարցվածների 46%-ը լիովին կամ ավելի շուտ համամիտ է, որ պետական կառավարումը երկրում իրականացվում է օրենքներով, սակայն միայն 22%-ն է լիովին կամ ավելի շուտ համամիտ, որ երկրի կառավարությունը արդարացի է վերաբերում շարքային քաղաքացիներին: Այդ հարաբերակցությունը Վրաստանում համապատասխանաբար կազմել է 35 և 36 տոկոս, իսկ Ադրբեջանում՝ 56 և 49 տոկոս:

Զանազան հանրային ինստիտուտների նկատմամբ վստահությանը վերաբերող հարցերի պատասխաններից երևում է, որ Հայաստանում հանրության կողմից ամենից ավելի մեծ վստահություն են վայելում բանակը (առավելագույն 5 հնարավորից միջինում 4.3 միավոր) և եկեղեցին (4.2 միավոր), մինչդեռ Ադրբեջանում՝ երկրի նախագահը և բանակը (4.4 և 4.2 միավոր), իսկ Վրաստանում՝ եկեղեցին և բանակը (4.5 և 4.1):

Հայաստանում սոցիալ-քաղաքական հաստատությունների նկատմամբ վստահության մակարդակի գնահատականների համադրումը 2004-2009թթ. համար բացահայտում է դրա աճի միտումը հաստատությունների մեծ մասի համար՝ վկայելով երկրում պետականության կայացումը: Հայաստանի Նախագահի նկատմամբ վստահության միջին գնահատականը 2006թ. կազմել է 2,9 (սանդղակի առավելագույն 5 միավորից), իսկ 2009թ.՝ 3.3 միավոր: Վրաստանի նախագահի նկատմամբ վստահությունը 2004թ. 4,4 միավորից նվազելով 2007թ. կազմել է 2,9 միավոր, իսկ հետագա տարիներին կրկին աճելով 2009թ. հաստատվել է 3,5 միավորի վրա: Հարավկովկասյան բոլոր երկրներում պառլամենտի հանդեպ վստահությունը զիջում է պրեզիդենտական ինստիտուտի հանդեպ վստահությանը: 2009թ. պառլամենտի հանդեպ վստահությունը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում միջինում եղել է համապատասխանաբար 2,7, 2,9 և 3,2:

Հարցման արդյունքում հավաքագրված տվյալադրանքների վերլուծությամբ, անշուշտ, կարելի է բազմաթիվ այլ բացահայտումներ անել, ներառյալ վերաբերմունքը այլ ազգերի ներկայացուցիչների, միջազգային կառույցների, կենցաղի, ունեցվածքի և այլնի մասին:

ՀՌԿԿ հավաքագրած տվյալների բազաները և հարակից փաստաթղթերը ազատորեն հասանելի են www.crcccenters.org կայքից:

ՀՌԿԿ-ն հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է՝ հիմնադրված 2003թ. Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում՝ Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը խթանելու նպատակով: Նյու Յորքի Կարնեգի կրթադրացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և տեղական համայնքային կառույցների համագործակցությամբ գործող ծրագիրը առաջարկում է հետազոտությունների, դասընթացների և տարածաշրջանային համագործակցության բազմաթիվ հնարավորություններ: Հայաստանում ՀՌԿԿ ծրագրերի մասին տեղեկությունների համար դիմե՛ք:

ՀՌԿԿ-Հայաստան. Երևան 0025, Աբովյան 52, 3-րդ հարկ: Հեռ./ֆաքս՝ 58-13-30, 58-14-50, էլ. փոստ՝ crcc@crcc.am, վեր-կայք՝ www.crcc.am: Վրաստանում և Ադրբեջանում ՀՌԿԿ գործունեության մասին հավելյալ տեղեկությունների համար այցելե՛ք www.crcccenters.org: